ՏԵՂԵԿԱՆՔ

2022 թվականի պետական բյուջեի նախագծում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ

2022թ պետական բյուջեի նախագիծը ԱԺ ներկայացնելուց հետո նախագծի եկամուտներում, ծախսերում և դեֆիցիտում առաջացել է փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն՝ որը պայմանավորված է փոխարժեքը նոյեմբերի 1-ի կուրսով վերահաշվարկմամբ, ի հայտ եկած նոր իրողությունները նախագծում արտացոլելու, լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսելու հանգամանքով:

1. Ընդհանուր առմամբ եկամուտների գծով զուտ ավելացումները կազմում են **1,548.3** մլն դրամ, որից՝
   - ✓ հարկային եկամուտները ավելացել են 82.8 մլն դրամով՝ պայմանավորված է կրթության բարելավման վարկային ծրագրի համաֆինանսավորման գումարների նախատեսմամբ,
   - ✓ այլ եկամուտները նվազել են 42.8 մլն դրամով (փոխարժեքի գծով վերահաշվարկների արդյունքում),
   - ✓ պաշտոնական դրամաշնորհները ավելացել են 1,508.4 մլն դրամ (փոխարժեքի գծով վերահաշվարկների արդյունքում և լրացուցիչ նախատեսվել է E5P-ի աջակցությամբ իրականացվող Երևանի ավտոբուսների ձեռքբերման դրամաշնորհային ծրագիրը):
2. Ծախսերի նվազել են 5,187.9 մլն դրամով, որից՝
   - ✓ Փոխարժեքի գծով վերահաշվարկների արդյունքում առկա միջոցառումների գծով (վարկային և դրամաշնորհային ծրագրեր, ՀՀ դիվանագիտական ծառայությունների և ներկայացուցչությունների պահպանում, անդամակցության վճարներ և այլ) նվազեցումները կազմում են 6,331.4 մլն դրամ.
   - ✓ ԲԳԿ-ների կողմից լրացուցիչ ներկայացված առաջարկությունների արդյունքում ավելացումները 1,143.4 մլն դրամ (հավելված 1-ը կցվում է):

մլն դրամ

	2022թ ԱԺ ներկայացված նախագիծ	Փոփոխություն	2022թ նախագծի վերջնական լրամշակված տարբերակ
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,946,236.1	1,548.4	1,947,784.5
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2,189,228.1	(5,187.9)	2,184,040.2
ԴԵՖԻՑԻՏ	242,992.0	(6,736.3)	236,255.7

Նշված փոփոխությունների արդյունքում պետական բյուջեի դեֆիցիտը պակասել է **6,736.3** մլն դրամով:

2022 թվականի պետական բյուջեի առաջնահերթությունների հավելվածում ներառվել է 85,556 մլն դրամի չափով լրացուցիչ միջոցառումներ, միաժամանակ վերագնահատման արդյունքում ավելացնելով 9,101 մլն դրամի չափով: